Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Որպես վերջաբան, միտքս ուզում եմ վերջացնել Նժդեհի թևավոր խոսքով.

- Պարտվում, ձախողվում են այն ժողովուրդները, որոնք չունեն հստակ նպատակներ, կամ, եթե ունեն էլ, ապա դրանք չեն համապատասխանում ազգային շահերին:

Միքայել Բաղայան
ՀՊՄՀ

Ազգային գաղափարների ամրագրում. հայրենասիրական դաստիարակությունը բանակում եւ երիտասարդության շրջանում

Անկախ պետականության հռչակումից հետո նախ՝ խորհրդային գաղափարախոսական տարրերը, ապա տնտեսական, սոցիալական, քաղաքական տեղեկատվական և հոգևոր ցնցումները Սփյուռքում սկսված ԱՄՆ-Ռուսաստան երկբևեռացումը, անշուշտ, ազդեցին հայոց արժեքային-գաղափարախոսական համակարգի վրա՝ հաճախ նպաստելով դրանց խաթարմանը: Արդյունքում այդպես էլ չստեղծվեց ազգային-պետական միասնական գաղափարախոսություն, որն իր մեջ ամբողջացնելով արժեքային-գաղափարական համակարգը, հզոր ինքնապաշտպանական զրահ կդառնար հայ ազգի և պետության համար: Այսօր նման գաղափարախոսության ստեղծումը դարձել է հրամայական պահանջ, ուստի, խոսելով ազգային արժեքների և գաղափարների ամրագրման, հայ երիտասարդության և բանակի հայրենասիրական դաստիարակության մասին, անհրաժեշտ ենք համարում դրանք դիտարկել հենց ազգային-պետական գաղափարախոսության և ազգային անվտանգության տեսանկյունից, ինչի համար էլ հարմար ենք համարում սկսել մեր ազգային կարևորագույն արժեքներից մեկից՝ հայ ընտանիքից: Ընտանիքը, լինելով ազգի և պետության կարևորագույն բջիջներից մեկը, նախասահմանված է սերնդագործությամբ, ազգի ժառանգական հաջորդականությունն ապահովելու և իր ներսում նորահաս սերնդի ազգային-պետական սկզբնական դաստիարակությունն իրականացնելու: Ընդ որում, ընտանիքի ապազգայանցումը, որն իրականացվում է արյունախառնության և օտար բարքերի ընդօրինակման ձևով, կործանարար է ազգի գոյության համար: Ընտանիքը կոչված է ապահովելու սեռային ներդաշնակությունը՝ յուրաքանչյուրն իր տեղում և իր դերում: Հայ ընտանիքում կարևոր դեր պետք է կատարի հայ կինը: Հայրենապաշտորեն դաստիարակված հայ կինը պետք է դաստիարակի մեր մատաղ

սերունդը: «Ունենանք առյուծածին մայրեր, որոնց արիական որդիներն ավելորդ դարձնեին Հայաստանը պաշտպանող արհեստական ամրությունները»,- նշում է սպարապետ Գարեգին Նժդեհը:

Անդրադառնալով ազգային գաղափարախոսությանը՝ նշանավոր հոգեբան Ա.Նալչաջյանը նշում է, որ պետք է լիովին օգտագործվեն մանկության և պատանեկության տարիների ընկալունակությունները, հակառակ դեպքում դա կանեն օտարները: Ուստի մեծ դեր ունեն կատարելու նախադպրոցական հաստատությունները, իսկ այնուհետև հայ դպրոցը, որն էլ հենց պետք է դառնա հայրենապաշտական դաստիարակության դարբնոց՝ ապագա հայ երիտասարդին զերծ պահելով մեր հոգեբանական ախտերից՝ ազգային գերարժեքությունից, ազգային թերարժեքությունից և ազգային սնապարծությունից, և հակառակը, ազգային զգացում, և ազգային գիտակցություն սերմանի հայրենասեր և հայրենատեր ապագա հայ երիտասարդի մեջ: Մեր կարծիքով դպրոցում մեծ դեր պետք է կատարի Հայ եկեղեցին, որը վերջին շրջանում կարծես օտարվել է հայ հասարակությունից: Անհրաժեշտ է անմիջական կապ ստեղծել դպրոցականի և հոգևորականի միջև, ինչի վառ օրինակ կարող է դառնալ Հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը դպրոցում հենց հոգևորականների կողմից: Այդ պրոցեսը պետք է շարունակեն նաև բանակում ծառայող հոգևորականները: Հայ երիտասարդը դեռ մանկուց պետք է մասնակցի և որոշակի դեր կատարի ազգային-կրոնական ծիսակատարությունների ժամանակ: Այդպես են վարվում նաև աղանդավորները, սակայն ի վնաս ազգի: Դպրոցում մեծ ուշադրություն պետք է դարձվի ռազմագիտություն առարկային և նրա արակտիկ կիրառմանը, ինչն էլ ևս կնպաստի ապագա հայ զինվորի ձևավորմանը:

Խոսելով Հայ եկեղեցու մասին՝ հարկ է ասել, որ այն պետք է ինքնապաշտպանական և դաստիարակչական մեծ առաքելություն կատարի թե՛ Սփյուռքում և թե Հայաստանում և միաժամանակ հանդիսանա մշակութապահպան և մշակութաստեղծ ազգային կառույց՝ հոգ տանելով հոգևոր արժեքների անվտանգության մասին: Հայ երիտասարդի հայրենասիրական դաստիարակման գործում մեծ դեր են կատարում նաև ազգային խորհրդանիշները, ուստի դրանք հենց մանկուց պետք է արմատավորել նրանց մեջ: Պետք է սերմանել հայոց լեզվի պաշտամունք, երիտասարդին հաղորդակից դարձնել ազգային մշակույթին:

Խոսելով Սփյուռքի հայ երիտասարդության մասին՝ տեղին ենք համարում մեջ բերել Նիկոլ Աղբալյանի խոսքերը. «Նոր սերնդին պետք է

ներարկել զորավոր ազգային գիտակցություն քաղաքական իմաստով: Նրան պետք է ներշնչել, որ ինքը հայ է և ուրեմն ուրիշ ազգի զավակ, քան այն մարդիկ, որոնք երկրի մեջ այսօր ապրում են, որ նա ունի մի բնիկ հայրենիք, որը պետք է ազատագրվի»: Իսկ նժդեհագետ Սուշեղ Լալայանը կարծում է, որ գաղթաշխարհի հայությունը պետք է ունենա մեկ նպատակ՝ Հայաստան վերադառնալ որպես հայեր կամ հայ մնալ մինչև հայրենադարձություն:

Ազգային գաղափարախոսության կարևոր մաս է կազմում տեղեկատվական համակարգը, որը, ցավոք, բաց է այսօր և շատ հաճախ լցվում է օտարածին և այլասերիչ մտքերով ու գաղափարներով: Խոսքը հատկապես վերաբերում է ՁԼՄ-ներին: Միայն պետության տեղեկատվական կառույցների՝ ազգի արժեքային համակարգին համապատասխանելու դեպքում չի խաթարվի մեր ազգային պետական ինքնությունը: Ինչ վերաբերում է տնտեսական և սոցիալական սպառնալիքներին, ապա դրանք երկրորդական են դառնում միայն ազգային հպարտության պարագայում.«Եղիր հպարտ՝ հայ լինելուդ համար, հպարտություն, որ սնվում է այն ամենից, ինչը գեղեցիկ է, վսեմ ու հերոսական Հայոց պատմության մեջ»,- նշում է Գ.Նժդեհը:

Անցնելով բանակի խնդրին՝ հարկ ենք համարում նշել, որ բանակի դերը չի սահմանափակվում սոսկ ազգի ֆիզիկական գոյության, պետության սահմանների անձեռնմխելիության ապահովմամբ: Բանակը նաև համազգային ոգու ամրապնդման խնդրում լուրջ դերակատարություն ունեցող կառույց է: Ուստի բանակը բարոյահոգեբանական մթնոլորտի խաթարումից զերծ պահելու և ազգի հրաշունչ զինվոր դաստիարակելու հնարավոր անհրաժեշտ է նախ և առաջ այնտեղ արմատավորել ամրակուռ գաղափարախոսություն, ՀՀ Զինված Ուժերում ձևավորել գաղափարադաստիարակիչների ինստիտուտ, Ռազմական ակադեմիայում ունենալ համապատասխան ֆակուլտետ, սկսել հայ զինվորի գաղափարախոսական նոր ծեռնարկի ստեղծման աշխատանքներ, զորամասերում ստեղծել լսարաններ՝ համապատասխան ձևավորմամբ և քարոզչական նյութերի ապահովմամբ: Հարկ ենք համարում բոլոր ԲՈՒՀ-երում մտցնել «Ազգային-պետական գաղափարախոսություն» դասընթացը: Վերը նշված դիտարկումներից հետո կարծում ենք, որ հրամայական է դառնում ազգային գաղափարախոսության ստեղծումը, որն էլ իր մեջ անշուշտ պետք է ընդգրկի հայ երիտասարդության պատվո-վարքականոնը: Եթե չկա ազգային գաղափարախոսություն, ապա անհրաժեշտ է ստեղծել նրա էսքիզը կամ հիմքը, ընդ որում մակերեսային լինելու դեպքում այն դատապարտված է: Իսկ

ինչու՞ ստեղծել, եթե մենք այն արդեն ունենք: Խոսքը վերաբերում է Գ.Նժդեհի և նրա համախոհների՝ մասնավորապես դոկտոր Հայկ Ասատրյանի կողմից ստեղծված «Ցեղակրոնություն» և «Տարոնականություն» ուսմունքներին և ընդհանրապես նրանց ստեղծած գաղափարներին: Նախ՝ 1) Ցեղակրոնությունը և Տարոնականությունը իրենց մեջ պարունակում են հայոց արժեքային-գաղափարական համակարգի բոլոր տարրերը, 2) Ցեղակրոնությունը ստեղծվել էր Սփյուռքի հայ երիտասարդության համար, 3) Ցեղակրոնությունը Հայոց բանակի պաշտոնական գաղափարախոսությունն է, որը, սակայն, տեսական հիմքերից պետք է փոխադրել պրակտիկ հիմքերի վրա, 4) Տարոնականությունը, լինելով Ցեղակրոնության ամբողջական տեսակը, ուսմունք է ոչ միայն հայ երիտասարդության, այլև ընդհանրապես ազգի համար. ուստի հարմար ենք համարում համառոտ դիտարկել և նշել Ցեղակրոնության և Տարոնականության որոշ հիմնադրույթներ: Նախ Ցեղակրոնությունը գաղափարական դատարկության վրա չի ստեղծվել, դրան նախորդել էին Ալիշանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Վարուժանի, Ահարոնյանի և այլոց ցեղաշունչ գաղափարները: Սակայն նրանք տվել էին գաղափարներ, բայց ոչ գաղափարախոսություն, որն էլ ստեղծեց Գ.Նժդեհը: Վերջինս հայությունը բաժանում է զգայա-գիտակցական երեք շերտերի՝ 1) Ցեղ, որը ազգի ընտրանին է և իր մեջ կրում է հայկականությունը, ազգային արժեքները և դրանք փոխանցում սերունդներին: 2) Ժողովուրդ, որը ազգի տատանվող և չկողմնորոշված մասն է: 3) Տականք, որն էլ ամբոխացած հակաազգային, հայության ազգուրաց տարն է և առաջնորդվում է «որտեղ հաց՝ էնտեղ կաց» սկզբունքով: Եվ ահա Նժդեհը հայ երիտասարդներին կոչ է անում ընտրել ցեղը և այն կրել իրենց մեջ: Նժդեհը հայ երիտասարդներին ցույց է տալիս ցեղն իր մեջ կրելու ճանապարհը: Մեր դժբախտությունների համար մեղավոր ենք նախ և առաջ մենք և մեզ պետք եղած ուժը պետք է փնտրել մեր մեջ: Երիտասարդը պետք է լինի հայրենապաշտ, մերժի խառնամուսնությունները, ունենա արյան պաշտամունք, պաշտի հայոց լեզուն և հայ մարդու հետ խոսի հայերեն, պետք է լինի նախնիապաշտ և ուժապաշտ. «Եղիր ուժեղ, էլի ուժեղ և միշտ ուշեղ», «Եղիր ուժեղ այնքան, որ թշնամիդ չհանդգնի հարձակվել», - ասում է Գարեգին Նժդեհը: Ցեղակրոնությունը նաև սերմանում է պաշտամունք դեպի ցեղի ճշմարիտ առաջնորդը և երիտասարդներին կոչ անում գործել և քիչ խոսել կամ խոսքը ապացուցել գործով, ուսմունքը երիտասարդից պահանջում է ունենալ առողջ հոգի՝ առողջ մարմնի մեջ:

Պահանջում է լինել քարոզիչ և գտնել նոր ուխտակիցներ՝ գործելով՝ «արիացիր, արիացրու» նշանաբանով:

Անդրադառնալով Տարոնականությանը ևս հարկ ենք համարում նշել նրա որոշ հիմնադրույթներ՝ ա. Հայրենաստեղծում, բ. Ազգակերտում, գ. Հայկական կողմնորոշում, դ. Հայկական բարոյական «Եսի» արձանացում, ե. Հայոց մշակութաստեղծ «Եսի» արձանացում, զ. հայոց հերոսական ոգու և ռազմական կորովի կերտում; Միաժամանակ Տարոնական ոգու առաջնորդները սահմանել են այն հատկանիշները որոնք պարտադիր են ցեղի անունից հանդես եկող հայ անհատների ու կազմակերպությունների համար: Դրանք են՝ ա. Ցեղի, հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք, բ. Ցեղային հավիտենականի խոր զգացում. գ. Ներցեղային բարոյական, դ. հաղթողական ոգի, ե. պատմական ճակատագրի խոր ճանաչողություն, զ. Հայրենի գործի և նպատակի հաղորդություն, է. Հայրենազգացողություն, ը. Օտարությունը որպես գերագույն դժբախտություն ապրելու առաքինություն, թ. Մեծագործության կամք ու բարոյականություն:

Ամփոփելով շարադրանքը հարկ ենք համարում հիշել Նժդեհի խոսքերը. «ուզում ես տեսնել գուշակել մի ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը»: Ուստի լավ ապագա ունենալու համար Նժդեհը երիտասարդներին հորդորում է լինել հայրենապաշտ և գաղափարապաշտ, լինել ազգի հրաշունչ զինվորը և հաղթանակի շենքը կառուցել իրենց հոգիներում; Նա նաև կոչ է անում երիտասարդներին իրենց երջանկությունը ծառայեցնել ազգի երջանկությանը, ձգտել և տեր դառնալ Մեծ, ազատ և միացյալ հայրենիքին. որը վաղը հենց երիտասարդներինն է լինելու: Դրա համար էլ Նժդեհը հայ երիտասարդությանը համեմատում է Ռուբիկոնի ափին կանգնած Կեսարի հետ.«Անցիր, հայ երիտասարդություն, անցիր Ռուբիկոնը, որի ափին քեզ հաղթության դափնին է սպասում»: Հենց երիտասարդության «Ռուբիկոնը» անցնել - չանցնելուց է կախված նրա վաղվա լինել-չլինելու հարցը, ինչը կորոշվի, կամ մեր հաղթանակով կամ էլ մեր պարտությամբ; Երիտասարդությունից է կախված թագավորող, թե թափառական ազգի կվերածվի հայությունը: Հետևաբար պետք է քաջ գիտակցել, որ վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ այսօր սերմանում ենք:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ